Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ



«Հայը բացի Հայաստանից չունի այլ հայրենիք:
Հայը Հայաստանից դուրս չունի այլ հաստատուն կովան,
բայց եթե Մայր Հայրենիքը, Հայ Եկեղեցին
և նրան գլխավորող Ամենայն Հայոց Հայրապետությունը՝
Սուրբ Էջմիածնի Հայրապետական Աթոռով»:

Գեւորգ Զ. Զորեքյան
Կաթողիկոս Ամենայն Հայոց

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին Տիրոջ կողմից հայ ժողովրդին տրված ամենամեծ պարգեւն է: Այն, իբրև Քրիստոսի Սուրբ Եկեղեցու անբաժանելի մի մաս, ունի ազգային դիմագիծ՝ կոչված է հայ ազգի մեջ քրիստոնեական հավատի հավերժական ճշմարտությունների քարոզման եւ նրան դեպի փրկության լույսն առաջնորդելու նվիրական եւ պատասխանատու առաքելությանը: Հայ Եկեղեցին, իր սկզբնավորումից մինչ օրս, երբեք չկորցնելով իր շարունակականությունը, միշտ եղել է մեր ազգի կողքին, նույնականացել նրա հետ, դարձել ազգային ինքնության անբաժանելի բաղադրիչը: Ազգային պետականություն ունենալու ժամանակ ջանացել է սատարել ու ամրապնդել այն, իսկ բացակայության պայմաններում՝ հայ ազգի հոգեւոր խնամքին զուգահեռ ստանձնել է նաեւ նրա մարմնավոր իշխանության բարդ եւ դժվարին պարտականությունը՝ իր հավատացյալ զավակների սրտերում վառ պահելով եւ բորբոքելով ազատության հուրը՝ մղելով աննահանջ պայքարով կորսված պետականության վերականգնման ուղիներ փնտրելու: Մեր օրերում, երբ իրականացել է հայ ժողովրդի՝ դարերով փայփայած երազանքը՝ պատմական հայրենիքի մի փոքրիկ հատվածում վերածնվել է մեր ազգային պետականությունը, Հայ Եկեղեցին շարունակում է այն ամրապնդելու իր պատմական առաքելությունը՝ անտեսանելի ցանցի նման հայրենիքին կապելով եւ նրա սիրով սնուցելով օտար ափերում դեգերող հայորդիներին:

Ամենայն Հայոց Հայրապետը առանձնահատուկ նշանակություն եւ դեր ունի մեր ազգի ու Եկեղեցու համար: Նա է Քրիստոսի առաքյալների՝ Ս. Թադեոսի եւ Ս. Բարդուղիմեոսի հիմնած աթոռի միակ ժառանգը եւ Հայ Եկեղեցու նվիրապետության գլուխը՝ այս ծառայությանը կոչված կամոքն Աստծո եւ ընտրությամբ մեր ողջ ժողովրդի: Համայն հայության կողմից Հայոց Հայրապետը դիտարկվում է ոչ միայն որպես Հայ Եկեղեցու նվիրապետ, այլեւ ազգի առաջնորդ, հայր՝ աշխարհասփյուռ հայ ժողովրդի միասնականության խորհրդանիշ եւ քրիստոնեական ու ազգային վեհ գաղափարների կրող եւ պահապան: Պետականության բացակայության պայմաններում Ամենայն Հայոց կաթողիկոսների ուսերին են ընկել ազգային-մշակութային կյանքը կազմակերպելու ու կարգավորելու, հայությանը հուզող բոլոր հարցերը արծարծելու, մեր տառապյալ ժողովրդի վերքերը դարմանելու ծանր եւ պատասխանատու լուծը: Հայոց Հայրապետի՝ ազգային կյանքում ունեցած այս բացառիկության գիտակցումից ելնելով՝ օտար բռնապետները ձգտել են զանազան միջոցներով՝ հայրապետական իրավունքների սահմանափակմամբ, աքսորով, բանտարկությամբ, անգամ ֆիզիկական ոչնչացմամբ, հայ ժողովրդին եւ Եկեղեցուն զրկել առաջնորդից՝ բարի հովվից: Ժամանակակից աշխարհը բազմաթիվ նոր մարտահրավերներ եւ խնդիրներ է առաջադրում հայ ժողովրդին եւ Եկեղեցուն, որոնց լուծման ուղիների փնտրտուքը եւ պատասխանատվությունը վերստին ընկած է Ամենայն Հայոց Հայրապետի ուսերին:

Մենք բոլորս, իբրև Հայ Եկեղեցու հավատացյալ զավակներ, հարատեւ աղոթքներով խնդրենք Տիրոջից իր սուրբ շնորհներով ավելի զորացնելու եւ ամրապնդելու Ամենայն Հայոց Հայրապետությունը, նրա ներկայիս գահակալին, նոր ուժ եւ եռանդ՝ հայ ազգի եւ Եկեղեցու բարօրությանն ուղղված նրա երազանքներն ու իղձերն իրագործելու առաքելությունը հաջողությամբ պսակելու գործում:

Ամէն հայի սրտից բխած
Լսի՛ր այս ձայնն, ո՛վ Աստուած
Երկար կեա՛նք տուր Հայրապետին
Երկար օրեր Հայոց Հօր...

Տ. Անդրեաս աբեղա Եզեկյան